

16 մարտի, 2021 թ., Երևան

HSBC Հայաստանը նշում է երկրում իր գործունեության 25-ամյակը

2021 թ.-ի մարտի 16-ը կարևոր օր է «Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ-ի (HSBC Հայաստան) համար. այն նշում է երկրում իր գործունեության 25-ամյակը: Բանկը Հայաստանում հիմնադրվել է 1996 թ.-ին որպես «Միդլենդ Արմենիա Բանկ» ԲԸ և ապա՝ 1999-ին, վերանվանվել «Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ: Որպես երկրում գործող իրապես միակ միջազգային բանկ՝ HSBC Հայաստանն իր նշանակալից ներդրումն է ունեցել հայաստանյան բանկային ոլորտի զարգացման գործում՝ իրականացնելով միջազգային լավագույն բանկային փորձը և խթանելով կորպորատիվ կառավարման, հաճախորդների սպասարկման և գործելաոճի չափանիշները: HSBC Հայաստանը նաև շարունակաբար արձագանքել է համայնքների ամենահրատապ կարիքներին՝ իրականացնելով բարձր ազդեցություն ունեցող կորպորատիվ սոցիալական պատասխանատվության (ԿՍՊ) ծրագրեր:

Երևանում գործող իր ութ գրասենյակների միջոցով HSBC Հայաստանը սպասարկում է մոտ 30,000 հաճախորդների և ձգտում բավարարել վերջիններիս արագորեն փոփոխվող կարիքները՝ առաջարկելով նորարարական, որակյալ և վստահելի բանկային լուծումներ: Բանկի վարկային և առևտրի ֆինանսավորման, ինչպես նաև կորպորատիվ ծառայությունները բարձր են գնահատվել ողջ աշխարհի դրամական միջոցների կառավարման և ֆինանսական շուկաների մասնագետների, ինչպես նաև ֆինանսական փորձագետների կողմից: Հեղինակավոր «Euromoney» ամսագրի կողմից երրորդ տարին անընդմեջ HSBC Հայաստանը ճանաչվել է որպես «Կորպորատիվ ծառայությունների գծով լավագույն բանկը Հայաստանում» (2018-2020), երկրորդ անգամ՝ «Կորպորատիվ ծառայությունների ոլորտում լավագույն ծառայություններ մատուցող բանկ» (2019-2020), ինչպես նաև «Շուկայում առաջատար բանկ առևտրի ֆինանսավորման ոլորտում» (2021):

«Վերջին 25 տարիների ընթացքում մենք ակնհայտաբար ենք եղել էական զարգացումների Հայաստանի բանկային ոլորտում, որտեղ HSBC Հայաստանն իր ուրույն դերն է ունեցել: HSBC-ում մենք առաջնայնություն ենք տալիս մեր հաճախորդներին, և մեզ համար մեր գործելաոճը նույնքան կարևոր է, որքան մեր գործունեության էությունը: Մեր պատասխանատվությունը մեր հաճախորդների, աշխատակիցների, բաժնետերերի և, առհասարակ, հասարակության առջև ավելին է, քան պարզապես շահույթ ձևավորելը: Այս տարիների ընթացքում մենք ներդրել ենք նորարարական լուծումներ ֆիզիկական անձ և կորպորատիվ մեր հաճախորդների համար: Մենք օգնել ենք միջազգային բիզնեսներին հաջողությունների հասնել և աճել՝ օգտվելով մեր գործառնականությունից և ընդգրկվելով միջազգային ցանցից: Այս ամենն անհնարին կլիներ առանց մեր աշխատակիցների նվիրումի և արհեստավարժության, ինչպես նաև առանց մեր հաճախորդների կողմից մեր նկատմամբ տարիների ընթացքում ցուցաբերված վստահության, որը մենք չափազանց բարձր ենք գնահատում», - նշում է HSBC Հայաստանի գլխավոր գործադիր տնօրեն Իրինա Մեյլանյանը:

Իր գործունեության 25 տարիների ընթացքում HSBC Հայաստանն իր ներդրումն է ունեցել համայնքների զարգացման գործում՝ իրականացնելով կրթության, ֆինանսական գրագիտության, աշխատանքային հմտությունների, ինչպես նաև

ձեռներեցության խթանմանն ուղղված բազմաթիվ ծրագրեր ամբողջ Հայաստանում: Ծրագրերի արդյունավետությունը բարձրացնելու և շարունակականությունն ապահովելու նպատակով HSBC Հայաստանը համագործակցել է բազմաթիվ բարեգործական և հասարակական կազմակերպությունների հետ՝ արձագանքելով տեղական համայնքների մարտահրավերներին ու առաջնահերթություններին և իրագործելով HSBC-ի կայուն զարգացման նպատակները: Բանկը և իր աշխատակիցները սատարել են սոցիալապես անապահով համայնքներին ճգնաժամի օրերին, երբ ՔՈՎԻԴ-19 համավարակը ներթափանցեց Հայաստան, ինչպես նաև վերջին աշխարհաքաղաքական լարվածությունների ժամանակ՝ կատարելով նվիրատվություններ և տրամադրելով օժանդակության այլ տեսակներ:

HSBC Հայաստանը շարունակելու է լինել իր հաճախորդների կողքին՝ ներդրումներ կատարելով նորարարական տեխնոլոգիաների, բանկային պրոդուկտների և ծառայությունների ոլորտում, ինչպես նաև նպաստել համայնքների զարգացմանը ԿՍԳ ծրագրերի միջոցով:

HSBC Խումբ

HSBC Holdings plc-ը՝ HSBC Խմբի ընկերության գլխամասը, գտնվում է Լոնդոնում: Խումբը ծառայություններ է տրամադրում 64 երկրներում և տարածաշրջաններում՝ Եվրոպայում, Ասիայում, Հյուսիսային և Լատինական Ամերիկայում, ինչպես նաև Մերձավոր Արևելքում և Հյուսիսային Աֆրիկայում: HSBC-ն հանդիսանում է աշխարհի ամենախոշոր ֆինանսական կառույցներից մեկը, որի ակտիվները 2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ կազմել են 2,984 միլիարդ ԱՄՆ դոլար:

HSBC Հայաստան

«Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ-ը հիմնադրվել է 1996թ-ին: Բանկը համատեղ ձեռնարկություն է, որի 70%-ը պատկանում է HSBC Խմբին, իսկ 30%-ը՝ արտերկրի հայ գործարարի: Էյչ-Էս-Բի-Սի Հայաստանը սպասարկում է շուրջ 30 000 հաճախորդի Երևան քաղաքում գտնվող իր 8 գրասենյակների և մոտ 350 աշխատակիցների միջոցով: 2020 թ.-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ բանկի ակտիվները կազմել են 303 միլիարդ ՀՀ դրամ՝ ներառյալ Էյչ-Էս-Բի-Սի Բանկ ՓԲԸ-ի Լոնդոնի կողմից Բանկի միջնորդությամբ տրամադրված վարկեր:

Բանկը վերահսկվում է ՀՀ Կենտրոնական Բանկի կողմից: